ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5
«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 24 դեկտեմբերի 2018թ.

ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան, Ն.Կոլտուխչևա
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Կ.Հայրապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Բանակցությունների կազմակերպման մասին
5. Պայմանագիր կնքելու որոշման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին
(Կ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ 17.12.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5667 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակիցներ ճանաչել՝	
1	<<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ	1,6,7,8,10-13,18,19,22,23
2	<<Դելտա>> ՍՊԸ	17,37,40
3	<<Իմմունոֆարմ>> ՍՊԸ	25,26

ProTender©
www.protender.am

4	<<ԹԱԳ-ՀԷՄ> ՍՊԸ	28,29,31,36,44,46
5	<<Լինարե> ՍՊԸ	2-5,14,21,27,39
6	<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ	32,34
7	<<Խաչպար>> ՍՊԸ	41
8	<<Լիանա Կաչյանց>> ՍՊԸ	42
9	<<ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ>> ՍՊԸ	24
Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝		
1	<<Դելտա>> ՍՊԸ	1,6,7,24,39
2	<<ԹԱԳ-ՀԷՄ> ՍՊԸ	27
3	<<Լինարե> ՍՊԸ	18,26

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Մերժված հայտի մասին
(Կ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ -ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բանակցությունների կազմակերպման մասին
(Կ.Հայրապետյան)

Քանի որ 47 չափաբաժնի համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցների չափը , ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. 26.12.2018թ-ին ժամը 11:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. <u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>
(Կ.Հայրապետյան)

Բացառությամբ՝ 47 չափաբաժնի՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:</u>
(Կ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը, հասցե՝ <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենք՝ ք.Երևան, Ներսիսյան 7/1 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան,

Ն.Կոլտուխչևա

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

ProTender©
www.protender.am